ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

12. 01. 2018թ

ՀՀ Լոռու մարզպետ

N 06

պարոն Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Ձորագյուղ համայնքի ղեկավարի 27.12.2017թ-ի թիվ 21-Ա և 12.01.2018թ-ի թիվ 01-Ա որոշումները :

Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

" 27 " ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թ.
ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշումամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Արշակունի Հովհաննիսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղ համայնքի սեփականության իրավունքը, Արշակունի Հովհաննիսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0103-0038 ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության 0.10396 հա հողամասի և 560.86 քմ ինքնակամ կառուցված ընդհանուր մակերեսով անասնագոմի և տնտեսական շինության նկատմամբ, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Ձորագյուղ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք

չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված Արշակունի Հովհաննիսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0103-0038 ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության 0.10396 հա հողամասում 560.86 քմ ինքնակամ կառուցված ընդհանուր մակերեսով անասնագոմը և տնտեսական շինությունը:

3. Անշարժ գույքին տրամադրել Ձորագյուղ համայնք Նոր խճուղի թիվ 1 փոստային հասցե:

4. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, 06-066-0103-0038 ծածկագրի 0.10396 հա հողամասը և 560.86 քմ շինությանը ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա
" 12 " հունվարի 2018 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ''Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ձորագյուղ համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 21-Ա որոշման 3-րդ կետում կատարել փոփոխություն և ձևակերպել հետևյալ խմբագրմամբ՝ անշարժ գույքին տրամադրել Ձորագյուղ համայնք Նոր խճուղի 1-ին փակուղի թիվ 1/1 փոստային հասցե:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան